ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

23.12.2024թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Գ.Քարհանյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ա.Բեջանյանը, Վ.Ջաղինյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Ա.Մալոյանը, Գ.Մելիքսեթյանը, - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետը ներկայացրեց իր դիտարկումները մարզպետի կողմից անցկացված նախորդ խորհրդակցությունների ընթացքում տրված հանձնարարականների կատարման, դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման, արդյունքների ամփոփման և դրանց ժամանակին և սահմանված կարգով ներկայացման վերաբերյալ՝ հայտնելով, որ ցանկացած հանձնարարականի պատշաճ կատարումը արտացոլում է կատարողի և տվյալ ստորաբաժանման գործունեությունը, պատասխանատվության զգացումը՝ տրված հանձնարարականների կատարման նկատմամբ:

Մարզպետն իր նկատառումներն ու դժգոհությունն արտահայտեց հանձնարարականների կատարման, սահմանված կարգով կատարման վերաբերյալ հաշվետվությունների չներկայացման, ինչպես նաև հետագայում տրված հանձնարարականների կատարման նկատմամբ հետևողականություն չդրսևորելու և չանդրադառնալու վերաբերյալ:

Մարզպետը հանձնարարեց ըստ ոլորտների համակարգող մարզպետի տեղակալներին, գլխավոր քարտուղարին և ստորաբաժանումների ղեկավարներին.

1.1 Այսուհետ բացառել հանձնարարականների կատարման սահմանված կարգի խախտումները, կատարման վերաբերյալ հաշվետվությունները սահմանված ժամկետներում գրավոր և ստորագրություններով ներկայացնել մարզպետին և հետևողական լինել դրանց կատարման, ինչպես նաև հետագայում գործառույթների վերահսկման ուղղությամբ:

1.2 Այլ կազմակերպություններից, հասարակական և միջազգային կազմակերպությունների կողմից մարզպետարանում ստացված տեղեկատվական պահանջ-խնդրանքները նախապես քննարկել մարզպետի հետ՝ դրանց տրամադրման օրինականությունը, հիմնավորվածությունն ու անհրաժեշտությունը ճշգրտելու և տրամադրելու նպատակով:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա.Բեջանյանը ներկայացրեց սեփական եկամուտների ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց պատասխանատու անձանց ՝ շարունակել հետևողական աշխատանքներ իրականացնել մինչև տարեվերջ հավաքագրման մակարդակը ավելի բարելավելու ուղղությամբ:

3. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ռ.Մարգարյանը ներկայացրեց սուբվենցիոն և պետական ծրագրերով իրականացված աշխատանքների կատարողականների, մոնիտորինգի և վճարումների վերաբերյալ տեղեկատվություն, ներկայացրեց նաև Աղետի գոտու վերականգնման շինաշխատանքների, մասնավորապես Ալավերդու և Քարկոփի կոյուղագծերի կառուցման, Աղետի գոտու բնակավայրերում Կառավարության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցներով բնակարանների գնման վկայագրերի տրամադրման գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց ամենօրյա հետևողական աշխատանքներ իրականացնել ավարտվող շինաշխատանքների կատարողականների վերաբերյալ, աշխատանքների արդյունքների ստուգումների և շեղումների անթույլատրելիության, բոլոր ծրագրերի ժամկետների և որակի պահպանման, ինչպես նաև՝ վճարումների հատկացման վերաբերյալ և ամենօրյա գրավոր տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

Լոռու մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին և քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ռ.Մարգարյանին՝ կրկին անգամ ուսումնասիրել ս/թ հոկտեմբերին Լոռու մարզպետի մոտ անցկացված խորհրդակցության ժամանակ տրված՝ տրանսպորտային ծառայությունների բարելավման և խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հանձնարարականի պահանջները ու հաշվի առնելով ոչ պատշաճ կատարումը, առաջարկություններ ներկայացնել հարցի կարգավորման նպատակով:

4. Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանը ներկայացրեց վարչության կողմից համայնքների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Մարզպետն իր մտահոգությունները հայտնեց վարչության կողմից իրականացված աշխատանքների որակի և ժամկետների վերաբերյալ՝ հայտնելով, որ անհրաժեշտ է առավել գործնական և անմիջական քայլեր ձեռնարկել համայնքներում իրականացվող գործառույթների, ընդունված իրավական ակտերի նկատմամբ վերահսկողության և այլ հարցերի լուծման ուղղությամբ:

Ելույթ ունեցան նաև Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վ.Ջաղինյանը, ստորաբաժանումների ղեկավարներ Ա.Թումանյանը, Ա.Մալոյանը, որոնք ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

5. Լոռու մարզպետը հանձնարարեց աշխատակազմի զարգացման, ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ Ա.Մալոյանին՝ ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ «Մանթաշյանց» հիմնադրամի հետ փոխգործակցության ծրագրերի վերաբերյալ, միաժամանակ համագործակցել և առաջարկություններ ներկայացնել ըստ տարածաշրջանների՝ մարզի համայնքների ղեկավարներին:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99